

## ԲԱՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՀՈՌՎԱԾՈՑ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԾԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ.

Ի Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ 1884

( Ծ-բ-ն-ի-ն-ն Ա-բ-բ Բ. Բ. ) .

Թէւ \*) Առաքել վարդապետի ասութեամբ 1660 թ. ( Հայոց ՌՃԹ ), Նիկիոյի երկմնագրով վերջ գրուեց Լեհաստանից Հայոց խռովութեանց, բայց խռովութեան և Հայաստանեայց եկեղեցւոյ բաժանման սկիզբը պէտքէ համարել 1662 թիւը, ( Յառաջ. Ե. ) երբ որ Իլլիովի Հայերը պարտաւորուեցին պապի նուիրակից Լատին վարդապետներ խնդրել, որ Հայ մանուկներին դաստիարակեն, կամ լաւ ևս 1664 թիւը պէտք է համարել, երբ որ այդ վարդապետները հասան Իլլիով: Այս մասին իւր դատողութիւնը Պ. Եղեան ամբողջացնումէ ազգաւ Պրանսիացի և Քէաղինեանց կարգից կրօնաւոր Ալոյիսիոս Պիզուի խաղերէն գրած յիշատակարանով և մի այլ լատիներէն գրած յիշատակարանով՝ որի հեղինակը յայտնի չէ: Շարունակենք Պ. Եղեանի յառաջարանը: Երկու յիշատակարաններն էլ սկզբնաւորվում են Հայոց ազգի մանաւանդ եկեղեցու մասին ինչ ինչ տեղեկութիւններով, և հերետիկոս են կոչում մեր եկեղեցու քաջ ախոյեան սուրբ հարց՝ որպիսի են Յովհան Օձնեցի, Գրիգոր Տաթևացի և շնչ. և ուղղափառ են անուանում նոցա, որոնք հակամիտութիւն են ունեցել դէպի միութիւն Հռոմայ հետ:

1623 թ. վախճանուեց Լեհաստանի Հայոց Մեսրոպը արքեպիսկոպոսը. հենց այդ ժամանակ պատահեց Մելքիսեդէկ կաթողիկոսի Իլլիով գնալը և 22 ամեայ յանդուգն գործողութեամբ, բարեկամ վարքով համբաւեալ Նսկոդայոս կամ Նիկիոյ Թորոսովից արքեպիսկոպոս Լեհաստանի Հայոց եպիսկոպոս ձեռնադրելը: Արդէն յայտնի է այս ձեռնադրութեան հետեւանքը Առաքել վարդապետի պատմութեան մասին գրուածից, աւելացնենք այս տեղ ըստ յառաջ բերելոյ Պ. Եղեանի Հ. Պիզուի խօսքը. « Իսկ ժողովուրդն

(\*) Յառաջ. եր. ԻԱ.

Հայոց անտի և այսր յամառեալ կայ ի հերձուածին և անգոսնէ զուղղութիւնս արարողութեանց. և ահա ամբ են 26 և աւելի ևս զի մարտնչի ընդ նմա ( իմա ընդ Նիկօլի ) սաստկաբար յոյժ, սրչափ կար իցէ մարդոյ, ոչ ինչ խնայելով յարծաթ, որպէս զի տնանկացան ամենեքեան, որ յառաջագոյն մեծատունքն էին առ հասարակ » ( եր. Իէ. ) :

Երբ որ Հայերը տեսան թէ չեն կարող Նիկօլի դէմ մարտել, Պապի գերիշխանութեան տակ մտան մի ձեռագիր Մաշտոցի մէջ ցոյց տալով թէ հայերը ընդունումեն Պապի գահերեցութիւնը և եօթն նախկին ժողովները, և խնդրեցին թագաւորի պաշտպանութիւնը. իսկ նա առաջարկեց որ Էջմիածնի կաթողիկոսը վաւերացնի այդ, որ գլուխ բերելու համար երեւելի մարդիկներից պատգամաւորներ գնացին Փիլիպպոս կաթողիկոսի մօտ՝ որ Նրուսադէմից դարձած լինելով՝ Պօլսումն էր։ Նիկօլն էլ շտապեց գնալու, որ չթողնի վաւերացնել, որովհետեւ այնուհետեւ ժողովուրդը իբրեւ կաթողիկ՝ իւր ունեցած արտօնութիւններով կարող էր յաղթահարել Նիկօլին \*) :

Բայց Նիկօլ դառնալով լատինական դաւանութիւնից զղջաց և նորից Հայաստանեայցս եկեղեցու գիրկը մտաւ կամ այդպէս կեղծեց, և Փիլիպպոս կաթողիկոսից ներման թուղթ, և առ ժողովուրդն օրհնութեան կոնդակ ստանալով՝ վերադարձաւ Իլվով, և սկսեց հետամուտ լինել, բարեկարգել եկեղեցիքը ըստ առաջնումն, առ աջօք լատինաց՝ կեղծելով թէ հաստատ է կաթողիկոսութեան մէջ։ Նորից Հայկական եկեղեցու հետ միանալու յիշատակը մըշտենջենաւորելու համար Նիկօլ 1652 թ. տօն կարգեց, որ ամենայն տարի տօնվումէր։ Թէեւ այս բանով Նիկօլ կարողացաւ ժողովրդեան սիրտը շահել, բայց իւր անբարոյականութեամբ, անառակութեամբ, կաշառառութեամբ և բռնի եկեղեցիները կողոպտելովը միշտ առելի էր. ուստի երբ Պապի նուիրակ Պիզնատելլին 1662 թ. եկաւ Իլվով՝ Հայերը բողոքեցին Նիկօլից և խնդրեցին « բառնալ զչարն ի միջոց հնարիւք իւրիք » ( Յառ. եր. Լ. ) Պիզնատելլին միջամուտ լինելով այս գանգատի քննութեան, տեսաւ որ լատին

(\*) Առաջիկ վարդապետ Գաբրիէլեցի ( գլ. ԻԸ. եր. ԿԳ. — ԿԵ. ) չէ յիշում թէ պատգամաւորները Փիլիպպոսի մօտ գնացած լինին Պապի գերիշխանութիւնը եււն. հայկական եկեղեցու մէջ հաստատել տալու։ Շատ հաւանական է որ սոյդ բանը միայն լատին գրողի մտքի ծնունդ է։

եկեղեցու հետ միանալն առ երեսու է. յորդորեց հայերին որ նորա հաւատոյ ծաւալման ժողովից խնդրեն Թէազինեան կարգից հա-  
յազէս Կղեմնաթոս Փալանոսին: Հայերը ընդունեցին Պիգնատելի  
առաջարկութիւնը, իսկ Նիկոլ խոստացաւ բնակարան ևս տալ:  
Հաւատոյ ծաւալման ժողովը կատարեց հայերի խնդիրը Փալանո-  
սին Հ. Ալոյիսիոս Պիգուի և մի սպասաւորի հետ Ելլով ուղարկե-  
լով, որոնք տեղ հասան 1664 թ. Մայիսի մէկին: Նիկոլը քարո-  
զիչներին սկզբում սիրով ընդունեց, յետոյ սկսեց նոցա վշտացնել  
հասարակ զինուորի պէս մի սենեակի մէջ յորդի վերայ սար-  
կեցնելով: Բայց լատին կրօնաւորները շուտով վհատողներից չէին  
նորա շուտով ստացան մի երկու սենեակ և 1665 թ. սկսեցին դա-  
տարակել հայ մանուկներին, որոնց թիւը շուտով 16 ի հասաւ:

Փալանոս տեսնելով դպրոցի յաջողութիւնը, սկսեց պահանջել  
Նիկոլից՝ որ նա բաժակի հետ ջուր խառնի և ժամակարգութիւնը  
ուղղագրի ըստ լատինականին: Նիկոլ սկզբում, առ ահի ժողովրդ-  
դեան՝ սկսեց հրաժարուիլ, բայց վախենալով որ իրան սահմանուած  
թոշակը Հռովմից կրկարճուի, 1664 թ. Սեպտ. 24 ին առաջին ան-  
գամ՝ սկսեց Պատի անունը կաթուղիկոսի անունից առաջ յիշել և  
հրամայեց քահանաներին, որ նորա բաժակի հետ ջուր խառնեն  
երբ քահանաները ընդգլխմացան և ժողովուրդը սկսեց յուզուել  
« Ի բռնութիւն անդէն ձեռն էարկ Նիկոլ և հալածել սկսաւ զհա-  
կառակորդս իւր: Ի հետապագ բանի իւրում՝ էր զոր հալածէր  
յաշխարհէն, էր զոր հաշէր և մաշէր ի բանալի, էր զոր ստիպէր  
սպառնալեօք, էր զոր լրտես ծաճկաց ընծայեցուցանէր յաչս Լե-  
հացւոց և այսու ճեպէր զնոսա փախստական մաղապուրծ ելա-  
նել ի սահմանաց պետութեան: Սւ յայտ՝ ամենայնի օգնական և  
խորհրդատու էր նմա ինքն Փալանոս հանդէպ արքեպիսկոպոսան Լա-  
տինացոց Իվովայ և Սիպի-նի Յիսոսեանց, ոյք գաղտնեօք գործէին  
և զանխուլ ի Հայոց, որպէս զի մի յարուսցեն զնոսա թշնամիս  
իւրեանց » . ( Յառ. եր. ԼԱ. ):

Ելլովի Հայոց թշուառութեան գոյժը հասաւ էջմիածին, և Փի-  
լիպոսի յաջորդ Յակովբ Չուղայեցի կաթուղիկոսը ոմն Պօղոս  
վարդապետի ուղարկեց Ելլով փրկութեան մի հնարք գտնելու:  
Բայց նա, թող որ ոչինչ չըկարողացաւ անել, այլև իւր վարդան  
անուն սարկաւազը առածեց, որ յետոյ յաջորդեց Նիկոլին: Պօ-  
ղոս վարդապետի գործը այն եղաւ, որ երբ Ելլովից արտաքսուեց,

կամենեց քաղաքի հայերին յորդորեց որ իրանց հայրենական օրէնքին հաստատ մնան և այս մօրով ճանապարհին Վալաքիայից մի թուղթ ևս գրեց: Շուտով կաթողիկ քարողիչները սկսեցին կամենել և Զամեստիէ քաղաքի հայերի վերայ ուշք դարձնել. ուստի Գալանոսի պահանջմամբ Նիկիոյ գրով պահանջեց, որ տեղւոյն քահանայք ջրախառն պատարագեն և ընդունեն Լատին եկեղեցու արարողութիւնը, սակայն ժողովուրդը այնպէս յուզուեց՝ որ թղթաւոր Բալտամովիչ Գրիգոր քահանան հաղիւ աղատեց իւր գլուխը:

1666 թուի Մայիսի 14 ին վախճանմամբ Կղեմենտիոս Գալանոսի առ վայր մի թուլացան Լատին քարողիչները, և նոյն ինքն Նիկիոյից նոցա ձեռքից դպրանոցի բնակութեան համար տուած տուր. բայց Իլվովի Լատին արքեպիսկոպոսը իսկոյն օգնութիւն հատու. ոչ միայն Նիկիոյն պարտաւորեցրեց տուել տալ, այլ անձամբ գնալ Կամենեց, եկեղեցու մէջ փափախութիւնները ներմուծուելու համար: Նիկիոյ 1666 թ. Օգոստոսի 12 ին գնաց Կամենից. նորա դործոց վերայ հսկելու և ստիպելու համար ուղեկցեց Հ. Պիղու՝ որ Գալանոսի մահից յետոյ քարողչութեան գլխաւոր էր կարգուած: Ժողովուրդը նորից սկսեց յուզուել և միաբան գոչումէին. « ոչ զոր գիտեն և ոչ ումեք հնազանդեն » բայց միայն կաթողիկոսին Եջմիածնի, և զի ընդգէմ բռնութեանց առ արքայ բողոքեցեն » . ( յառ. եր. ԼԴ ): Փոքր էր մնում որ Նիկիոյ և իւրայինք զոհ գնային ժողովրդի արդարացի յուզմանը. տեղւոյն Լատին արքեպիսկոպոսը ինդրեց զօրաւորից զօրք՝ յօգնութիւն, բայց նա մերժեց պաղատելով. « մի զգուել զՀայս, որ միմիայն են ժողովուրդ հաւատարիմ և պատուաւոր քաղաքին » . ( յառ. եր. ԼԴ ):

Գործին վախճան դնելու համար՝ Նիկիոյի կողմից Բալտամովիչ Գրիգոր քահանան, իսկ ժողովրդեան կողմից՝ մինը, զանազան պիտոյից համար հանգանակուած 2000 ոսկու գումարով գնային Վարշաւայ, թագաւորի և պապի նուիրակի մօտ՝ նոցա տնօրէնութիւնը խնդրելու. ժողովուրդը թուղթ գրեց նաեւ Ս. Եջմիածնի Կաթողիկոսին. թէպէտ ինքն Պիղուն էլ էր կամենում գնալ, բայց չըզնաց կասկածելով թէ, մի գուցէ նորա բացակայութեամբ Նիկիոյը ժողովրդից փող ստանայ և նոցա կողմն անցնի:

Ժողովրդեան պատգամաւորն ու նորա ընծայքը ոչ ինչ զօրեցին անել, որովհետեւ Կազիմիր թագաւորը Վարշաւայում չէր. իսկ թա-

գուհին, որ լատին հոգեւորականների պատրաստի գործիքն էր, օգնեց լատին քարոզիչներին՝ նոցա ի նպատակ գործելով պապի նուիրակի հետ: Ժողովուրդը որոշեց մինչև կաթուղիկոսից պատասխան ընդունելը ընդիմանալ, բայց քահանաները եկառաւորեցին և այսպէս կամենեցում 1666 թուի Հոկտեմբերի 1-ին մատուցուեց առաջին պատարագը լատին արարողութեամբ: «Եւ թէպէտ ժողովրդեան մեկուսացեալ յուրացողացն ոչ երթայր յեկեղեցի, այլ յաւուրս տօնից դիմէր ի մերձաւոր քաղաքն Խոտէն ի Վալախեայ լսել զաստուածային պաշտամունս ըստ հարազատ արարողութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ, բայց պահանջելով եկեղեցականացն լատինացւոց՝ արդելաւ նոցա յաւուրս տօնից արտաքս քան զքաղաքն ելանել» (յառ. եր. 15):

Ի սկզբան՝ թէև միութիւնը առ երեսու էր, բայց յետոյ կատին քարոզիչների և կաթուղիկ իշխանների ջանքով և ստիպմամբ Հայերը ընդելացան նորամուծութիւններին. և Նիկոլ որպէս թէ մի շատ երեւելի գործ է կատարել ի պարգև մի գիւղ խնդրեց: Կատինք քանի որ տեսնումէին թէ Նիկոլ իրանց նպատակին ձեռնառու է և նորան պէտք ունին՝ փաղաքշումէին, իսկ երբ այնքան պէտք չըզգացին Նիկոլին, ոչ միայն նորա խնդրած գիւղը չըտուին, այլ և աշխատեցին հեռացնել նորան. ուստի Հ. Պիլուսիսեց համոզել նորան որ իւր վաստակոց փոխարէն՝ անձամբ գնաց Հռովմ և Հաւատոյ ծաւալման ժողովից փառաւորուի:

Նիկոլ նախադգալով հեռանալը դանդաղումէր գնալ, բայց անսպով պապի նուիրակի և Հ. Պիլուսի թախանձանքին 1668 թ. Պեկտեմբեր ամսին մեծ շքով ճանապարհ ընկաւ Հռովմ գնալու: «Անդանօր (Հռովմ) ընկալան զնա (Նիկոլ) սիրելութեամբ բազմաւ, բայց նա ընդհուպ ծանեաւ թէ ըմբռնեցաւ յորոգայթի, մահաւանդ յորժամ արգիլեն նմա արտաքս ի քաղաքէն ելանել և ի պէտս զբօսանաց իսկ» (Յառ. եր. 17): Իւր հայրենի եկեղեցին և ազգը դաւաճանողին արգա՛ր պատուհաս:

«Եկաց մնաց Նիկոլ ի Հռովմ ամս վեց իբրեւ ի գառազեղի ըմբռնեալ, և ի փրկանս ազատութեան իւրոյ, հարկեցաւ կատարել զպայմանս, որ առաջարկեցան նմա. այսինքն է ձեռագրաւ իւրով ընծայեաց ի պէտս բնակարանի գպրանոցին Խլովայ տուն մի մեծ ի կոփածոյ վիմաց, զոր ոչ կամէր տալ յառաջագոյն. ձեռնագրեաց իւր յաջորդ զՎարդան Յունանեան, զխմբեալն ամենէին ոգւով

լատինական եկեղեցւոյ. և ուր ուրեմն մեծամեծ դժուարութեամբք, ըստ միջնորդութեան երեւելի արանց՝ զերծեալ մեկնեցաւ ի Հռովմայ և դարձաւ յաթու իւր յԵլիով ի վախճանի 1674 թմին, ուրանօր վերստին կենցաղավարեցաւ ըստ առաջնումն, ուովելով և խուելով, մինչև վախճան հասանէր չարաբաստ կենացն յամին 1681 ։

Լատին քարոզիչները միութիւնից յետոյ ևս չըկարողացան հաճոյ լինել ժողովրդեան և նոցա սիրտը գրաւել. երկու կողմից էլ կասկածանօք էին նայում միմեանց վերայ, մինչև անգամ երբ հիւանդութիւն պատահեց դպրանոցում՝ լատինները կարծումէին թէ հայերն են դեղել։ Լատին քարոզիչների արարքը ըստ յառաջ բերելոյ Պ. Եղեանի՝ նոյն ինքն լատիններին ևս հաճելի չէր. այնպէս որ մէկը լատին քահանաներից քարոզի մէջ ասել է. «Քարոզիչքն հանգոյն աղուխուց տիրացան ստացուածոց և կալուածոց եկեղեցւոյն Հայոց» . (եր. 15)։

Պ. Եղեան երկու յիշատակարաններից առնելով դպրանոցի մասին համառօտ տեղեկութիւն տալուց յետոյ, իւր գործը ամբողջացնումէ ուրիշ աղբիւրներից։ Ըստ առաջնումն՝ հետեւենք և այժմ Պ. Եղեանին։

Դպրանոցը ներքին անբարեկարգութեան պատճառով ենթարկուելով տրքեպիսկոպոսի և ժողովրդեան դժգոհութեան, վերջապէս 1684 թուին Յովսէփի կայսեր հրամանով փակուեց։ Հաւատոյ ծաւալման ժողովը կամեցաւ նոր դպրանոց բանալ, Թէպփն կրօնաւորների գրատունը, որ զետեղուած էր առնթեր Հայ եկեղեցւոյն 20000 բուրլի գնահատուեց, 22500 բուրլի էլ սահմանեց առ այս Հաւատոյ ծաւալման ժողովը, իսկ լեհաց կառավարութիւնը, ի տեղի բնակութեան դպրանոցին՝ Կամենեցի Յիսուսեան կարգի վանքը նշանակեց։ Բայց դպրոցը գլուխ չեկաւ. լատին Վեհատանի յետին բաժանման պատճառով գրամների  $\frac{2}{3}$  գործադրուեց Կամենեցի գլխաղեօնի վերայ, իսկ  $\frac{1}{3}$ ը Կամենեցի դպրանոցի վերայ, այն պայմանով՝ որ Հայ կաթողիկոսներից մի պատանի ձրի ուսանի այն տեղ՝ հոգեւորական դառնալու համար։

Նիկիոյ Թորոսովիչին յաջորդեցին հետեւեալ հայածէս կաթողիկէպիսկոպոսները. — Մաւալոցի աշակերտ Վարդան Յունանեան 1681 թուին, որ բոլորովին բաժանուեց Ս. Էջմիածնից։

Յովհաննէս Տովբիթ Աւգուստովիչ 1715 — 1751

Յակովբ Ստեփաննոս Աւգուստինովիչ 1752 — 1783:

Յակովբ Թումանովիչ 1799 — 1816:

Կայետանոս Վարդերեսովիչ 1817 — 1831:

Սամուէլ Կիւրեղ Ստեփանովիչ 1831 — 1858:

Գրիգորիոս Միքայէլ Սիմոնովիչ 1858 — 1875:

Գրիգորիոս Յովսէփ Ռամաշկան 1875 — 1881:

Իսահակ Նիկողայոս Խասկովիչ 1882:

Լեհաստանի մի քանի գաւառները Ռուսաց իշխանութեան տակ մանեւոյ, միացան Մագիլեփի կաթոլիկ եպիսկոպոսի թեմի հետ որովհետեւ Ռուսաց պետութիւնը չրկամեցաւ որ իւր հպատակները ուրիշի իշխանութեան տակ լինին, և այսպիսով փոքրացաւ Իլլիովի արքեպիսկոպոսի թեմը:

1806 թուին կանոնիկոս Յովսէփ Քրիշտոֆովիչ 3000 ռուբլի ռոճկով նշանակուեց Կամենեցի եպիսկոպոսի փոխանորդ՝ հայերին հովուելու համար, և 1810 թուին Իլլիովի արքեպիսկոպոսից բոլոր կաթոլիկ ռուսահայոց վերայ եպիսկոպոս ձեռնադրուեց ու 1812 թուին արդէն ստանումէր 6000 ռուբլի, զիւանական, ճանապարհային ծախուց և ռոճիկի համար. Յովսէփ Քրիշտոֆովիչի մահուանից յետոյ տեղուէ կարգուեցին հայ կաթոլիկ թեմին 1816 թ. Անտոնիոս Վարդերեսովիչ, 1822 թ. Նիկողայոս Մոշորոյ, որից յետոյ կառավարութիւնը Կամենեցի և Մագիլեփի մի քանի հարիւր հայերի համար չրկամեցաւ առանձին առաջնորդ նշանակել, որով հայ կաթոլիկները իրանց եկեղեցիներով խառնուեցին և միացան Լատինների հետ, որոնք ախրեցին հայ եկեղեցիներին ու նոցա հարստութեանցը:

Գրեթէ նոյն վիճակին ենթակայ են Իլլիովի արքեպիսկոպոսի իշխանութեան տակ եղած հայերը, որոնց եկեղեցական պաշտամունքը թէև հայերէն են, բայց ազաւազած, կրճատած և աւելացրած: Հայերը, որ կէս դարու չափ բոլոր ուժով մտքառումէին իրանց կրօնի և եկեղեցու համար, խառնուելով Լեհացիների հետ, մոռացել են իրանց մայրենի լեզուն, և հակառակ հայկական վաղեմի սովորութեան՝ չեն մասնակցում իրանց եկեղեցական գործերին: Այժմ Իլլիովի արքեպիսկոպոսի իշխանութեան տակ հայ կաթոլիկ կոչվողները թիւը 3000 աւելի չէ, որոնք միայն իրանց գէմքի գծագրութեամբն յիշեցնում են թէ նախնի Անեցւոց սերունդն են:

Այս տեղ Պ. Եղեան իւր գրուածքը կնքումէ մի փոքրիկ վերջաւանով և հետեւեալ բառերով. « Արտաքոյ Հայաստանեայցս Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ չիք հայութիւն » :

Եւ արդարեւ. մի ազգի գոյութեան հաստարանը նորա քաղաքական և կրօնական անկախութիւնն է. այդ երկուքն են, որ պահպան հրեշտակի պէս հսկումեն ազգի գոյութեան վերայ: Ինչպէս մարդս կենդանի է հոգւով և մարմնով, այնպէս ևս մի ազգ կենդանի կարող է լինել իւր քաղաքական և կրօնական անկախութեամբ. քաղաքական կեանքը՝ ազգի մարմինն է, իսկ կրօնական անկախութիւնը՝ նորա հոգին:

Մարդը առանց սեպհական տան՝ թափառական մնալով՝ ենթարկւումէ նիւթական և բարոյական հարուածների, իսկ ազգը առանց հայրենիքի՝ վտարանդի և վայրափառին զանազան երկիրներ ընկնելով՝ նոյն հարուածներին է ենթարկւում. թողնելով ուրիշ օրինակները աչքի առաջ բերենք Անեցւոց գաղթականութիւնն ի Նահաստան և նոցա կորուստը ըստ հոգեւորին և մարմնականին:

Մենք Հայերս մեր գոյութեան միայն մի հաստարան ունինք, — այդ մեր ազգային եկեղեցին և կրօնական անկախութիւնն է. սիրենք մեր ազգային եկեղեցին և կրօնական անկախութիւնը իբրեւ միամօր զաւակ, որ դարուց ի դարս յաւերժացնելու է Հայ անուներ ազգաց մէջ՝ ժառանգելով Հայ անուան յատկացեալ սեպհականութիւնքը: Պահենք, պահպանենք մեր մի հաւիկ ազգային եկեղեցին և կրօնական անկախութիւնը, և նա հազարաւոր և բիւրաւոր հայեր կը յարուցանէ իւրաքանչիւր տարի:

Այս տեղ կը կնքենք և մենք մեր խօսքը, խոստանալով ի ժամանակին ըստ բերելոյ հանգամանաց, երկու յիշատակարանների մասին ևս առանձինն խօսել: